ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, Ք. Ապարան Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), ֆաքս(0252-2-44-45)
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՄԱՅԻՍԻ 2016 Թ N 26 –Ա

## ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ ,,ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ'' ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ,,Իրավական ակտերի մասին'' օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի և ,,Տեղական ինքնակառավարման մասին'' օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի դրույթներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 22.12.2011 թ ,,Նոտարական վավերացում չպահանջող պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին,, N 1851-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 28.04.2016 թ N 16 արձանագրային որոշումների պահանջների.

Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝

1. Ապարանի համայնքի սեփականություն հանդիսացող ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը նվիրատվության կարգով, անհատույց սեփականության իրավունքով, հանձնել ,,Հայջրմուղկոյուղի'' փակ բաժնետիրական ընկերությանը՝ համաձայն հավելվածի:

Ավագանի՝ Կողմ ( 6 ) Դեմ ( 0 ) Ձեռնպահ ( 0 )

Գագիկ Ալեքսանյան
Նվարդ Բարսեղյան
Վարդան Բարսեղյան
Հայկ Շմավոնյան
Հովհաննես Շահբազյան
Արսեն Պողոսյան

Համայնքի ղեկավար՝ Գ. Աբրահամյան

Հավելված

Ապարանի քաղաքային համայնքի ավագանու

16.05.2016 թ N 26- Ա որոշման

## ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ,,ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ'' ՓԲԸ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ ՀԱՆՁՆՎՈՂ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ

| N | Անշարժ գույքի անվանումը | Չափի միավոր | Քանակ, ծավալ | Սեփականության վկայական /համարը, տրման ամսաթիվը/ | |
|---|---|---|---|---|---|
| 1 | Խմելու ջրի ներքաղաքային ջրատար | Գծամետր | 34753,67 | N- 2660881 | 17/11/2010 թ |
| 2 | Ներքաղաքային ջրահեռացման խողովակաշար | Գծամետր | 2195,9 | N- 2660882 | 17/11/2010 թ |
| 3 | Բառոժներ թաղամասի քլորալյանի շենք՝ սպասարկման տարածքով | Քմ/հա | 76,09/0,0394 | N- 2335062 | 09/04/2007 թ |
| 4 | Խմելու ջրի ինքնահոս ջրամատակարարման համակարգ ՝ | | | Սեփականության վկայական չունի կցվում է ավարտական ակտը<br>ենթակա է ճշտգրման | |
| | Դրենաժ | Գծամետր | 175 | | |
| | Ջրընդունիչ | հատ | 3 | | |
| | Խողովակաշար | գծամետր | 3852 | | |

Աշխատակազմի քարտուղար՝ Ա.Կարապետյան

ԱՊԱՐԱՆԻ ՄԵՐԻԱ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ СЕКРЕТАРЬ АДМИНИСТРАЦИИ * ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ * РА МАРЗ АРАГАЦОТН